

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՀԱԱԳԱՅԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ**

Ռ. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հոլանդիայի մայրաքաղաք Հաագայում 1907 թ. հունիսի 2(15)-ին բացվեց խաղաղության միջազգային երկրորդ կոնֆերանսը, որին ի թիվս 44 պետությունների, մասնակցում էր նաև Ֆրանսիան։ Կոնֆերանսը տեղեց մինչև նույն թվականի հոկտեմբերի 5(18)-ը։ Օգոստոսի 8-ին Հաագայի ժամանել ֆրանսիացի հայասերների մի պատգամավորություն, որի կազմում էին «Pro Armenia» հանդեսի խմբագիր, հայտնի բանաստեղծ Պիեռ Կիյարը և «Revue de Paris» ամսագրի խմբագիր Վիկտոր Բերսը։ Պետավորականության մյուս երկու անգամները՝ մեծանուն դրող Անատոլ Ֆրանսը և ֆրանսիական պառլամենտի անդամ Ֆրանսիս դը Պրեսանսեն, չկարողանալով ժամանակին հասնել Հաագա, ընկերներին արտոնել էին խոսել նաև իրենց անունից։

Ֆրանսիացի հայասերների պատգամավորությունը կոնֆերանսին ներկայացրեց մի հիշատակագիր, որը բերում ենք ամբողջությամբ.

«Պր-ն պատգամավոր,

Աֆրիկայի, Եգիպտոսի, Պարսկաստանի, Բուլղարիայի քառասուն քաղաքների հայ գաղութները մեզ խնդրել են խաղաղության կոնֆերանսի համար Հաագա համախմբված քաղաքակիրթ բոլոր պետությունների ներկայացուցիչների առաջ դնել այն բողոքները, որ Թուրքիայի դժբախտ հայ ժողովուրդը՝ ջարդերի, բռնությունների ենթակա, քաղցի և կարիքի ձեռքից ջրհեղձան մատնված, անկարող էր ուղղակի ներկայացնել։ Այս իսկ ժամին, երբ էջմիածնի կաթողիկոսի իրավասու ներկայացուցիչները երեսուն տարուց հետո վերանորոգում են այն դիմումը, որ արվեց Բեռլինի կոնգրեսի անգամներին, մենք կարծում ենք, որ արդարև մեր պարտքն է հրավիրել ձեռք բացված ուշադրությունը մի խաղաղասեր և աշխատավոր ժողովրդի ծանր վիճակի վրա, որը հետևանք է եվրոպական մեծ տերությունների հանդիսավոր կերպով ստորագրած վերջին դաշնագրի չիրագործվելուն։

Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, ավելի ևս վճռական, քան Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը, որոշ պարտքեր է դնում ստորագրող պետությունների վրա։

Արդ, ոչ միայն Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը մեռած տառ է մնացել, այլև 1894—96 թվերին երեք հարյուր հազար հայեր, անգն ու անպաշտպան, կոտորվեցան։ Այդ նողկալի ջարդերի շրջանում պետությունները իրենց 1895 թ. մայիսի 11-ի մեմորանդումով հիշատակում էին այն անհրաժեշտ բարենորոգումները, որոնք առանց վնասելու թուրքական կայսրության ամբողջությանը, երաշխավորում էին հայերին տարրական ապահովություն կյանքի, պատվի և գույքի։ Հաագայի ներկա համաժողովի նախագահը՝ ինքը, որպես Պոլսի ռուսաց դեսպան, մասնակցել է այն մեմորանդումի խմբագրությանը, որը շունեցավ պաշտոնական կիրառություն, ինչպես և Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը։ Ներկա դիմումին կցված փաստերը, քաղված այսօրվան առատ թղթակցություններից, ձեռք կծանոթացնեն պերճախոսությունից էլ ավելի, թե ինչ վիճակի մեջ է հայ ժողովուրդը քառնինը տարի այն օրվանից հետո, երբ եվրոպական պետությունները աշխարհի առաջ նրան խոստացան իրենց հովանավորությունը։

Մեծ ջարդերին հաջորդեց ներսողական (այդպես է բնագրում—Ռ. Ս.) ջնջման սխտեմը—գյուղից գյուղ գնալու արգելքներ, անձերի բռնություն հարկեր հավաքելիս, հայերի հողերի գրավում հօգուտ իրենց հարևանների կամ գաղթական մահմեդականների, հայերի զաղթի մերթ արտոնություն, մերթ արգելքներ, հրդեհումներ գյուղերի և նույնիսկ մասնակի կոտորածներ։

Հայկերի վիճակը երբեք ավելի վատթար չի եղել, քան այսօր և եթե նրանց շուտափույթ օգնություն չհասնի, նրանք կարող են ջնջվել այն երկրից, ուր ապրում էին դարերից ի վեր և ուր ներկայացած էին եվրոպական քաղաքակրթությունն ու միտքը: Զարդերին հավասար սովն ու աղքատությունը, գաղթականությունն ու կրոնափոխությունը օժանդակում էին թվի աստիճանական նվազելուն այն ժողովրդի, որ ավելի քան որևէ այլ ժողովուրդ հավատարիմ մնաց յուր ազգության, իր պատմական եկեղեցուն, իր ազգային ավանդություններին և որ պահպանեց այդ բոլորն անձեռնմխելի իր կրած այնքան արհավիրք՝ երից հետո՝ արյունոտ գոհերի գնով:

Ոչ Ռեւինի դաշնագիրը ստորագրած պետությունները և ոչ նրանք, որոնք մասնակցում են Հաագայի ժողովին, չեն կարող անտարբեր մնալ դեպի մի ժողովրդի ճակատագիրը, որի գոյությունը պիտի ապահովեն տակավին չըջնված քաղաքական դաշնագրերը: Դա կլինի մի վերավորանք մարդկության և մի արտասովելի բռնաբարոյան միջազգային իրավունքի:

Երբ սակայն արդարության այս նկատումները բավական չեն հիմնավորելու մեր դիմումը, թող թույլ տրվի մեզ նկատել տալ, որ հարատև բռնության վիճակը ընդհանուր պետության հայ վիլայիթներում կազմում է մի նույնքան հարատև վտանգ աշխարհի խաղաղության համար, այնպիսի միջազգային բարդություններ կարող են ծագել այդպիսի դրությունից, որ առաջ կբերեն եվրոպական ընդհանուր պատերազմ: Ձեր բարձր իմաստությունը, ինչպես և ձեր արդարադատության զգացմունքը կախաշտպանի ձեր առաջ մի փոքրիկ սողովրդի դատը, որ այլ հանցանք չունի, բայց եթե իր խաղաղասիրտությունը և արևմտյան քաղաքակրթության իր ճաշակը. որով նա կարողացն է վաստակել Ռեւինի դաշնագրի ստորագրող պետությունների ցարդ անկախությունը մնացած համակրանքը:

Մենք հավատում ենք, որ անօգուտ չդրինք ձեր առաջ հայերի պահանջների իրավական հիմունքները. 1878 թվի հուլիս 13-ի 61-րդ հոդվածը և 1895 թվի մայիս 11-ի մեմորանդումը: Որպես եվրոպական վեց պետություններից մեկի քաղաքացիներ, խորունկ կսկիծով մենք մեզ զգում ենք հանցակից ու պատասխանատու մի անիրավության՝ այսօրան երկարատև և այս աստիճան աղետաբեր՝ եվրոպայի պատվի և խաղաղության համար:

Վիկտոր Բերար
Անատոլ Ֆրանս
Ֆրանսիս դը Պրեսանսե
Պիեռ Կիյարս:

Միաժամանակ Հաագա էր ժամանել հայ պատգամավորություն, որի կազմում էին Արևմտյան եվրոպայի հայոց հոգևոր հովիվ Գևորգ եպիսկոպոս Ությունճյանը, Թիֆլիսի ներսիսյան դպրոցի հոգաբարձության անդամ Ավետիս Ահարոնյանը և «Հայրենիք» օրաթերթի նախկին տնօրեն Հ. Շահնազարը: Սրանք Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա. Վանեցու (Խրիմյան Հայրիկ) կողմից լիազորված էին ներկայանալ Հաագայի կոնֆերանսին և «մեծ տերությունների ներկայացուցիչներին մատուցանել Հայկական հարցի լուծման համար կաթողիկոսի հրահանգած խնդրագիրը»¹:

Ֆրանսերեն գրված այս փաստաթուղթը պատվիրակությունը հանձնում է եվրոպական մեծ պետությունների և Ամերիկայի Միացյալ Նահանգների ներկայացուցիչներին: Որպես «առանձին հարգանքի և վստահության նշան», նույն խնդրագրի մի օրինակ, համաձայն կաթողիկոսի հատուկ հրահանգի, հանձնվում է Պարսից շահի ներկայացուցչին²:

¹ Հայաստանի Հանրապետության պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ԳԱԱ), ֆ. 56, ց. 1—2, գ. 93, թ. 1361—1363: Ֆրանսերեն տեքստը տե՛ս նույն տեղում, գ. 96, թ. 18—20:

² Նույն տեղում, գ. 93, թ. 1359:

³ Նույն տեղում, թ. 1361:

Փաստաթղթում ասված էր.

«Պ. պատգամավոր,

Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից Հաագայի համաժողովն ուղարկված Ություճյան եպիսկոպոսը վստահություն է առնում հիշեցնել պ.պ. պատգամավորներին հետևյալը.

Մեծ պետությունների ներկայացուցիչները 1878 թվին կազմեցին այն դաշնագիրը, որով ընդ երկար սահմանվում էր հպատակ կամ ավատական ժողովուրդների բախտը: Նույն ժամանակ Պոլսի Հայոց պատրիարք Տ. Ներսես արքեպիսկոպոս մի պատվիրակություն ուղարկեց Բեռլին առաջնորդությունը՝ արքեպիսկոպոսին (այսօր Ամենայն Հայոց կաթողիկոս)՝ առաջադրելու համար պետությունների ներկայացուցիչներին իր ժողովրդի դժբախտ կացությունը Ասիական Թուրքիայում: Այս դիմումն էր, որ ծնունդ տվեց Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածին. «Բարձրագույն Դուռը հանձն է առնում անհապաղ իրագործել հայկական գաղառներում տեղական պետքերին համապատասխան անհրաժեշտ բարելավումներն ու բարենորոգումները և երաշխավորում է հայերի ապահովությունը շերտերի և քրդերի հարձակումներից: Բ. Դուռը պարբերաբար կհաղորդի իր ձեռք առած միջոցների մասին պետություններին, որոնք և կհսկեն այդ միջոցների իրագործման վրա»:

Քսան տարի շարունակ այս հոդվածը ոչ մի կիրառություն ունեցավ, իսկ 1894—95 թվերին բարենորոգումների փոխարեն մեր ժողովուրդը ենթարկվեց ջարդերի: Վեց պետությունների ներկայացուցիչները այն ժամանակ կազմեցին մի հիշատակագիր և մի հայտագրով հանձնեցին Բարձրագույն Դուռին 1895 թ. մայիսի 11-ին:

Դեսպանների նախագիծը պարունակում էր այն որոշումների ամբողջությունը, որն անհրաժեշտ էր ի կատար ածել հայկական վիլայեթների վարչական, տնտեսական և դատական կազմակերպության մեջ, այլև օգտակար էր համարվում մի առանձին հայտագրով մատնացույց անել այն միջոցները, որոնք անցնում էին վարչական կանոնադրության շրջանակից, լայր և որոշ հիմքեր էին նույն կանոնադրության, և Բարձրագույն Դուռը պիտի ընդուներ այն որպես ամենատարրական անհրաժեշտություն:

Նորին Գերազանցություն պ. Նելիդով՝ Պոլսի ռուսաց դեսպանը հիշյալ պաշտոնագիրը ներշնչողներից և ստորագրողներից մեկն եղավ:

Ահա տասն տարի է անցել, և ոչ մեկն այդ բարենորոգումներից, որոնք այն ժամանակ նկատվում էին անհրաժեշտ և բարերար նույնքան մահմեդականների, որքան և քրիստոնյաների համար, չիրականացան: Դրան հակառակ, Թուրքիայում հայերի ծանր կացությունն ավելի ու ավելի վատթարացավ: Հապարավոր հայեր ոչնչացան, հատուկ կոտորածներով մահացան: Եվ Մուշի դաշտի դեպքերը անցյալ հունիս ամսին վերստին բաց արին 1894—95—96-ի ջարդերի շրջանը:

Նորին Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ Մկրտիչ Ա. երեսուն տարուց հետո գալիս է խնդրելու քաղաքակիրթ պետությունների արդարադատությունն ու գթությունը: Այսօր խոր ծերության մեջ, նա չի կամենում թողնել այս աշխարհը առանց կատարելու այս գերագույն պարտքը դեպի իր ժողովուրդը⁴:

Կաթողիկոսի խնդրագիրը կոնֆերանսի պատգամավորներին հանձնելու հաջորդ օրն իսկ հայ պատվիրակներին ոչ-պաշտոնական տեսակցություն է հրավիրում կոնֆերանսում Ֆրանսիայի երկրորդ ներկայացուցիչ Դեմուրենել դը Կոնստանը: «Դուք շատ լավ եք արել, որ եկել եք Հաագա»,—ասում է նա և ապա ավելացնում, —«Պաշտոնական հավանական մերժումը, որ դուք երեկ կլսեք, թող ձեզ բնավ չհուսահատեցնի: Ժողովուրդների բախտը մի օրում, մի տարում, նույնիսկ հաճախ մի քանի տասնյակ տարիներում չի փոխվում: Այս համաժողովն էլ ենթարկվում է առաջխաղաց զարգացման, ժամանակի հետ նա էլ դառնալու է ավելի գործնական, ավելի օգտակար, և ես հավատա-

⁴ Նույն տեղում, Թ. 1959—1961:

դած եմ, որ վերջիվերջո նա պիտի կարողանա ձեր և ձեզ նման տառապող ժողովուրդների ցավերին դարման տանել: Դուք շատ լավ եք արել, որ եկել եք,—կրկնում է իր ասածը ֆրանսիացի դիվանագետը,—դուք այսպիսով հիշեցնում եք ձեր խնդրի այժմեությունը մի այսպիսի հեշինակավոր ժողովին, որ ինքնին սրդին աննշան վաւտակ չէ»⁵:

Ընդհանուր բնույթի և ոչինչ չպարտավորեցնող այս խոսքերին հայ պատվիրակները հակադրում են արևմտահայության դժնդակ պատկերը, պատմում Մշո դաշտի վերջին անցքերի, «տուն ու տեղ թողած և իր անհյուրընկալ դարձած հայրենիքից խույս տված» բազմաթիվ կանանց ու երեխաների մասին: «Մի մնաց նվորոպայի սլաշապանությունը, 61-րդ հոդվածը, 1895-ի մեմորանդումը, ո՛ր մնացին խոստացված ռեֆորմները»⁶,—հուսահատ բացականչում են կաթողիկոսական պատվիրակները:

Ի՞նչ կարող էր պատասխանել պաշտոնական Ֆրանսիայի ներկայարուցիչը, եթե ոչ այն, որ ինքը լավատեղյակ է արևմտահայության վիճակին: «Այդ բոլորը դիտեմ,—շարունակում է դը Կոնստանը: Գիտեմ այն, որ այս կոնգրեսը չի կարողանա Հայկական հարցը լուծել: Բայց հավատացնում եմ ձեզ, որ այդ հարցն անլուծելի մնալու չէ, որ ձեր այս դիմումը Հաղթանակի համաժողովին՝ այդ ուղղությամբ մի կարևոր քայլ չէ»⁷:

Հայ պատվիրակները, թեև զոհ էին ֆրանսիական դիվանագետի բարյացակամ վերաբերմունքից, գալիս են այն համոզման, որ Ֆրանսիայը պաշտոնական մերժման է ենթարկվելու համաժողովի կողմից: Այդ համոզումն աւելի ևս ամրապնդվեց, երբ մեծ տերությունների մյուս ներկայացուցիչներին և ոչ մեկը (բացառությամբ Ռուսաստանի) նույնիսկ չբարեհաճեց ընդունելու կաթողիկոսական պատվիրակներին՝ միայն «պատիվ անելով դրությունը պատասխանելու առանձին-առանձին նամակներով, որոնք «համարյա նույնն էին, ասես մի ընդհանուր համաձայնությամբ գրված»⁸:

1907 թ. օգոստոսի 30-ի (12 սեպտեմբերի) իրենց զեկուցագրում Մկրտիչ Ա. կաթողիկոսին պատմելով իրենց առաքելության արդյունքների մասին, հայ պատվիրակները չէին թաքցնում, որ եվրոպական դիվանագետների քաղաքավարի ու վայելուչ ոճով գրված նամակներն իրենց վրա «վհատեցուցիչ տպավորություն գործեցին»: Եվ ահա թե ինչու: «Մենք գտնում էինք,—ասված է զեկուցագրում,—որ անգամ մերժելու դեպքում մեծ տերությունների ներկայացուցիչները կարող էին, նույնիսկ պարտավոր էին ընդունել այն ժողովրդի պատվիրակներին, որ տառապում, մարտիրոսվում է շնորհիվ իրենց իսկ կառավարությունների նենդ քաղաքականության»⁹: Այս հուսահատական, շարդարացված ակնկալիք պարունակող տողերից հետո միայն հայ «դիվանագետները» հանգում էին այն իրատես հետևություն, որ «տարաբախտաբար դիվանագիտությունը միշտ իր մտածելու և դորժելու առանձին եղանակն ունի, ուր արդարությունն ու իրավունքը բնավ տեղ չունեն»¹⁰:

Ինչպես վերը նշվեց, միայն Ռուսաստանի ներկայացուցիչն էր, որ ընդունեց Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա.-ի պատվիրակներին: Դա Փարիզում ուսական դեսպան Ա. Նելիդովն¹¹ էր՝ Հաղթանակի խաղաղության միջազգային կոնֆերանսի համանախագահը: Կաթողիկոսին ուղղված իրենց զեկուցագրում վերը հիշված հայ պատվիրակները դրում են, որ Ա. Նելիդովը, ընդունելով իրենց «խորե կոնգրեսի նախագահ, աշխատում էր մեղմել իր ընկերակիցների մերժման ավելորդ խստասրտությունը և ընդունում էր Հայ դատի

5 Նույն տեղում, թ. 1363—1364:

6 Նույն տեղում, թ. 1364:

7 Նույն տեղում, թ. 1365:

8 Նույն տեղում:

9 Նույն տեղում, թ. 1365—1366:

10 Նույն տեղում, թ. 1366:

11 Ա. Ի. Նելիդովը 1883—1897 թթ. Ռուսաստանի դեսպանն էր Կ. Պոլսում:

միջազգային բնավորությունը, որն ինքնին արդեն մեզ թեթև զոհություն տալու բնույթն ունեւորւմ¹²:

Հայ պատգամավորության անունից դիմելով Ա. Նեխիդովին, Ություճյան սրբազանն ըստ էության կրկնում է կաթողիկոսի դիմումի հիմնական միտքը, որ «Թուրքիայի մեր ժողովրդի դրությունը այժմ ավելի վատթար է, քան այլ ժամանակ»: Ապա շարունակում է. «Դարմանը, պրն. նախագահ, 'Իուք ասենից ավելի լավ գիտեք, զա Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի և 1895 թ. մեմորանդումի գործադրությունն է: Մենք եկել ենք խնդրելու Հաագայի կոնգրեսին, որ իրադրծվին Եվրոպայի կառավարությունների՝ դեպի հայերը հանձն առած պարտավորությունները»¹³:

Սակայն 4. Պոլսում ուսական նախկին դեսպանի պատասխանը ևս, ֆրանսիական դիվանագետի ասածների նման, պարտավորեցնող ոչինչ չէր պարունակում: Ավելին: «Ջեր խնդրի նման այլ դիմումներ եղան կոնգրեսում,—ասել էր ուսականագետը:—Վրացիներ, մակեդոնացիներ, բոսնիացիներ և ուրիշ ազգեր իրենց ազգային հարցի լուծումը պահանջեցին մեզանից, բայց մենք անկարող եղանք ընդունել այն խնդիրները, որպես կոնգրեսի լիազորություններից դուրս: Ուրիշ դիմողների մենք չենք էլ ընդունել, ի հարգանս ձեր, ես այս ունկնդրությանը համաձայնվեցի իբրև կոնգրեսի նախագահ, ձեզ ասելու համար, որ Հայկական հարցը ինչպես և նման հիշածս հարցերը, չեն կարող այս կոնգրեսի քննությանը առարկա դառնալ, որպես միանգամայն դուրս մեր իրավասությունից»¹⁴:

Հայ պատվիրակները կոնգրեսի նախագահին նկատել են, որ «Հայկական հարցը չի կարելի խառնել որևէ ուրիշ քաղաքական խնդրի հետ, որը միջազգային բնավորություն չի կրում», որ «հայ ժողովրդի դատը Թուրքիայի ներքին խնդիր է», որ «ևս իրապես այսօր միջազգային խոշոր խնդրներից մեկն է: Եվ իբրև այդպիսին պեաք է խաղաղության միջազգային կոնգրեսի քննության առարկա դառնալ»:

Հանդիպման վերջում, ի զարմանս հայ պատվիրակների, Ա. Նեխիդովը խոսում է կովկասահայերի և թուրքահայ գաղթականների մասին, ընդգծելով, որ ինքն անձամբ շատ է օգնել վերջիններին, միջամտել է սրաց օգտին, նպաստել, որ նրանց թույլ տրվի մտնել Ռուսաստան, բայց «հայերը տարաբար նետվեցին ուսական հեղափոխության մեջ»: Նման կշտամբանքին հայ ներկայացուցիչները պատասխանում են, որ «Ռուսիայի բոլոր ժողովուրդների երիտասարդությունը ավելի կամ պակաս մասնակցություն ունի հեղափոխության մեջ և զարմանալի չէ, որ հայ երիտասարդներ էլ ճարվին նույն ճանապարհով գնացողներ, ինչպես շատ և շատ զուտ ուս երիտասարդներ»: Առավել մեծ զարմանքով են լսում հայ պատվիրակները Նեխիդովի այն կշտամբանքը, թե իբր իրենք եկել են Հաագայի կոնգրեսին «բողոքելու նաև հանուն կովկասահայ ժողովրդի՝ ուսական կառավարության դեմ»: Ժխտելով նման «տարօրինակ մեղադրանքը», պատվիրակությունը հարկ է համարում չբավարարվել բերանացի հերքումով, և անմիջապես դրավոր հերքում է ուղարկում Ա. Նեխիդովին՝ «վճռապես շեշտելով պատգամավորության միակ ու իսկական նպատակը. թուրքահայ ժողովրդի խնդիրը»¹⁵:

Հայ պատվիրակները, հուսահատված ինչպես հիշյալ տեսակցությունից, այնպես էլ մեծ տերությունների ներկայացուցիչների անտարբերությունից, տեղեկացնում են կաթողիկոսին, որ «Հայ ժողովրդի պաշտպանությունը խոստացող պետությունները, հանձին իրենց ներկայացուցիչների, չէին կամենում լսել իրենց իսկ խոստումների մասին, որ կատարել էին տասնյակ տարիներ առաջ մեծադրորդ հանդիսավորությամբ»¹⁶:

¹² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1—2, գ. 93, Բ. 1366:

¹³ Նույն տեղում, Բ. 1366—67:

¹⁴ Նույն տեղում, Բ. 1367:

¹⁵ Նույն տեղում, Բ. 1367—1368:

¹⁶ Նույն տեղում, Բ. 1368:

Հասագայից մեկնելուց առաջ նրանք պատրաստում են մի «բողոք-պատասխան» ուղղված յոթ մեծ պետությունների պատգամավորներին, որտեղ, մասնավորապես, ասված էր. «Հաագայի Բ կոնգրեսը իր նախագահի բերանով և բազմաթիվ պատգամավորների նամակներով հրաժարվեց մեզ լսել առաջ լինելով իրավասության խնդիրներ, որ մենք չենք կարող համարել հիմնավոր...»

Մյուս կողմից, ամեն ոք գիտե, որ թուրք կառավարության կազմակերպած ջարդերը հայկական դավառներին հասցրել են և հասցնում են ամենավարագ պատիժազմների շարիքները և որ նույնիսկ Եվրոպայի խաղաղությունը երբեք չի կարող ապահով լինել, քանի Փոքր Ասիայի հուզմունքները կսպառնան իրար դեմ հանել պետությունների բանակները:

Այս պարագաներում մեզ անընդունելի է թվում, որ խաղաղության միջնորդային կոնգրեսը էությունաբար հրաժարվել Հայկական հարցի որևէ քննությունից, եթե, ինչպես ցույց են տալիս նորագույն փաստերը, սկզբունքային մշակույթ և պարզ ցանկություններ արտահայտելուց հետո, կոնգրեսը մտածում է վերջապես անցնել միջոցների և սկզբունքների կիրարկելուն»¹⁷: Միևնույն ժամանակ հայ պատգամավորությունը պատրաստում է «քաղաքակիրթ մարդկություն» ուղղված մի կոչ, որը հեռագրով հաղորդվում է մի շարք նրկրներին «խոշոր և շիտակ թերթերին»:

«Մենք հիշեցնում ենք,—ասված էր դիմումի մեջ,—որ մինչդեռ պետությունների դեպի հայերը հանձն առած երաշխավորությունները միում են մեռած տառ, թուրք կառավարությունը կազմակերպած ջարդերով, բռնի դավաճանություններով և զաղթերով ավերում ու ամալացնում է Հայաստանը:

Հանդիպ այս անիրավության դեպի մի ժողովուրդ, որ պահանջում է իրեն իր տարրական իրավունքները Եվրոպայից ճանաչված, մենք կոչում ենք անում քաղաքակիրթ աշխարհի խղճին և թող նա դատի, թե Հայկական հարցի խաղաղ լուծման համար յուրաքանչյուր ջանքի այսպիսի անհաջողությունը, ավելացնելով մարտիրոս ժողովրդի հուսախաբությունը, արդյո՞ք չի խախտի իսպառ այդ ժողովրդի հավատը դեպի խաղաղ միջոցների արժեքը»¹⁸: Հիշյալ կոչը արձագանք է գտնում Եվրոպական մի շարք երկրների մամուլի էջերում, ազդեցիկ պարբերական հրատարակություններում: Հաագայի խաղաղություն կոնֆերանսում Պարսկաստանի ներկայացուցիչ Սամաբ խանը, ինչև ուշադրումով, հայ պատվիրակների հետ հանդիպելու հրավեր է ուղարկում, Տեղակալության ժամանակ վերջինս ասում է, որ «հայ պատգամավորության դիմումը Հաագայի կոնգրեսին, չնայելով պաշտոնական մերժման, խոշոր նշանակություն է ունեցել Հայկական հարցի մոտալուստ լուծման համար», որպես հուսադրիչ օրինակ վկայակոչելով Բուլղարիան, որն «անդամ անցյալ խաղաղության կոնգրեսին» համարյա կիսով չափ մերժվելու վիճակումն էր, մինչդեռ այս անգամ նրա իրավունքի մասին և ոչ մի վեճ չէ եղած, որ հայ պատգամավորության ընդունվելը կոնգրեսի նախագահից ինքնին արդեն մի խիստ նշանակալից փաստ է»¹⁹: Հայ պատվիրակների կասկածները փարատելու համար շահի ներկայացուցիչն ավելացնում է, թե հայերը շատ բան վաճառակցին Հաագայի կոնֆերանսին ուղղված իրենց դիմումով, ուստի բնավ հուսահատվելու տեղ չունեն²⁰: Հետաքրքրական է, որ դիվանագիտական քաղաքավարությունից այն կողմ շանցնող այս խոսքերը կաթողիկոսի պատվիրակները որակում են որպես «վճռական հայտարարություն», որն իրենց համար «խիստ նշանակալից էր»²¹:

17 Նույն տեղում, թ. 1368—69:

18 Նույն տեղում, թ. 1370:

* Խոսքը 1899 թ. Հաագայում կայացած խաղաղության միջազգային առաջին կոնֆերանսի մասին է:

19 22 ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 1—2, դ. 93, թ. 1371:

20 Նույն տեղում:

21 Նույն տեղում:

Հայկական հարցի այն ժամանակվա վիճակի շուրջ նրանց խորհրդածությունները և տպավորությունները, որոնք հաղորդվում են Մկրտիչ Ա կաթողիկոսին նույն 1907-ի սեպտեմբերի 11-ի թվակիր զեկուցման մեջ, արտացոլում են հայ հասարակության մեջ իշխող այն մտայնությունը, որ Հայկական հարցի միջազգայնացումը խնդրի լուծման միակ միջոցն է։ Հայկական դատի միջազգայնացումը, — ասվում էր փաստաթղթում, — այն աստիճան հիմնավորված է և պատմական իրավունքներ է ձեռք բերել, որ այլևս անհաշիվ է այլ ճանապարհներ, այլ միջոցներ փնտրել այդ հարցը լուծելու, քան միջազգային դիվանագիտական ճանապարհն է։ Հարցի վերստին բարձրացման համար որպես սկիզբ, նրանց կարծիքով, անհրաժեշտ էր Ռուսաստանի կամ Անգլիայի նախաձեռնությունը, որովհետև «Ֆրանսիան որքան և մաքսահարկան գաղափարներով առաջնորդվի, որքան բարյացակամ տրամադրություն ունենա դեպի հայ ժողովուրդը, որի մասին կասկածել չի կարելի, երբեք չպիտի կարողանա կամ կամենա Հայկական հարցի լուծման ձեռնարկները չպիտի կարողանա կամ կամենա Հայկական հարցի լուծման ձեռնարկները հանձն առնել։ Իր միջազգային գրությունն մեծապես արգելք է հանդիսանում անկախ դիվանագիտական քայլերի. վերջին տարիների մի շարք փորձերը ապացուցանում են մեր այս տեսությունը»։

«Հետևապես, — եզրափակում են հայ պատվիրակները իրենց զեկուցման մեջ, — հրապարակի վրա մնում են դարձյալ Անգլիան և Ռուսիան, որոնց մեր ցակցությունն մոտավոր Արևելքում մինչև այժմ մեզ համար ճակատագրական եղավ։ Հայտնի է, որ 1878-ին Անգլիան խանգարեց Ռուսիային մեզ համար մի բան անել և 1895-ին Ռուսիան խանգարեց Անգլիային Հայաստանը փրկել։ Ինչ եղավ մեզ համար լորդ Բիկոնսֆիլդ, նույնը եղավ մեզ համար ավելի սոսկալի հետևանքներով Լորանով-Ռոստովսկի»²², նոր պայմաններում, ասված է այնուհետև զեկուցագրում, երբ շնորհիվ Անգլիայի թագավոր Էդվարդ Ի-րդի «հույսովապ խաղաղասիրական ջանքերի» այդ հակամարտությունը վերացված է կամ «վերանալու վրա է», և այսօր ամբողջ Եվրոպայում համարյա խոշոր հակառակության խնդիրներ չկան, ստեղծվել է խիստ բարենպաստ հնարավորություն Հայկական հարցի բարձրացման և լուծման համար։

Սակայն նման լավատեսությունը զեկուցագրի հեղինակները զրկում էին հիմքից, կաթողիկոսին գրելով հետևյալ տողերը. «Տարաբախտաբար մենք Հաագայում համոզվեցինք, թե որքան լքված, որքան մոռացված ենք մենք Եվրոպայում։ Մենք խաբվում էինք հաճախ մեր հարցի շուրջը այս կամ այն երկրում բարձրացած աղմուկից, հրապարակական ժողովներից, գասախոսություններից և միանգամայն մոռացության տալիս դիվանագիտական լռիկ ու գաղտնի աշխատանքների ճանապարհը, առանց որի միմիայն հասարակական կարծիքը աղմկելով, մի բան, որի օգտակարությունը նույնպես անվիճելի է, մեր հարցը լուծել անհնարին է. հասարակական կարծիքը Եվրոպայում չափից դուրս պատրաստված է, մեր հարցի էությունը և իրավունքը ամենքի համար պարզ է լույսի պես։ Հարկավոր է նրա շուտափույթ լուծման համար դիվանագիտական բարձր շրջանների հետ մասնավոր և զգույշ հարաբերություն մեջ մտնել, հարկավոր է աշխարհի բախտը տնօրինող մեծամեծների տրամադրությունը հասկանալ և հօգուտ մեզ թելադրություններ անել հեղինակավոր անձանց միջոցով։ Ահա այս տեսակետից է, որ մենք գտնում ենք, որ հայ դատը մոռացված է»²³։

Հուզահեռներ անցկացնելով Հայկական և Մակեդոնական հարցերի միջև, զեկուցագրի հեղինակները գտնում են, որ վերջինս շուտով կլուծվի շնորհիվ այն բանի, որ «Մակեդոնական հարցը իբրև շարունակ արժարժող և պահանջող բուլղարական իշխանի պես հեղինակավոր մեկն ունի։ Մեզ համար մտածող, հոգացող, աշխատող չկա բարձր շրջաններում»²⁴։

²² Նույն տեղում։

²³ Նույն տեղում, թ. 1373։

²⁴ Նույն տեղում։

Զեկուցագիրն ավարտվում էր այն առաջարկներով, որոնց ընդունումն ու իրականացումը, ըստ նրա հեղինակների, մեծապես կօգնեին Հայ դատի լուծմանը: «Թե՛ Անդլիայում, թե՛ Իտալիայում և թե՛ Ֆրանսիայում և թե՛ այլ երկրներում չափազանց հնարավոր է հարաբերության մեջ մտնել դիվանագիտական բարձր շրջանների հետ, հեշտ է աշակիցներ փնտրել ընկալարող անձանց մեջ և հասնել միևյուրեք պետությունների գլխավորները: Մասնավորապես Իտալիո համակրությունը չափազանց անհրաժեշտ է մեզ: Մեր հարցը այնպիսի անվիճելի համակրություն ունի քաղաքակիրթ համարյա բոլոր երկրներում, նա այն աստիճան հասունացած է և այնպես ծանրացած է ֆաղափակիք մարդկության խղճի վրա, որ մեր կողմից և հիշված ուղղությամբ համառ և խելացի ջանքեր չեն կարող ապարդյուն անցնել, մանավանդ քաղաքակույն ներկա պարագաներում»²⁵:

Զեկուցագրի վերջում ասվում էր, որ կաթողիկոսին ավելի մանրամասն բացատրություններ տալու համար էջմիածին է գալիս Ա.վ. Ահարոնյանը: Զեկուցագրին կցված հավելվածում, որի տակ դրված էին Գ. Ություխովիչի սրբազանի և Հ. Մանուկյանի ստորագրությունները, հույս էր հայտնվում, որ Հայկ. հարցը համաժողովը ձեռնհաս կլինի քննարկելու հայոց խնդիրը և համապատասխան որոշում կայացնելու: Բայց քանի որ «հայ ազգը պետություն չլինելուն համար աթոռ չունի ժողովին մեջ և հետևաբար զրկված է իր խնդիրը սեղանին վրա դնելու հատուկ և ուղղակի միջոցներ», գրության հեղինակների կարծիքով, Հայոց կաթողիկոսը կարող էր դիմել անկողմնակալ որևէ պետության, օրինակ, Շվեյցարիային, հանձն առնել հայոց դատը մտցնելու: Խաղաղության ապագա համաժողովի մեջ «հանուն և ի սեր մարդկության»:

АРМЯНСКИЙ ВОПРОС НА ГААГСКОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ МИРА

Р. Г. СААКЯН

Резюме

В июне—октябре 1907 г. в Гааге проходила вторая международная конференция мира, в которой приняли участие представители 44 стран.

В связи с этим 8 августа в Гаагу прибыла делегация французских армянофилов, в состав которой входили редактор журнала «Pro Armenien», известный поэт Пьер Кийар, редактор «Revue de Paris» Виктор Берар, член французского парламента Франсис де Прессанге и выдающийся писатель Анатолий Франс. Делегация вручила участникам конференции послание, в котором говорилось, что державы, подписавшие Берлинский договор 1878 г., не предприняли никаких эффективных мер для претворения в жизнь статьи 61, что привело к массовым погромам 1894—96 гг. в Западной Армении.

Аналогичное послание было вручено участникам Гаагской конференции от имени католикаса всех армян Мкртыча I Ванеци (Хримян Айрик).

²⁵ Նույն տեղում, ք. 1373—1374:

²⁶ Նույն տեղում, ք. 1375: